ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ - ՈՒՂԵՑՈՒՅՑ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՄԱՍԻՆ

ՏՐՎՈՒՄ Է ԱՆՉԱՓԱՀԱՍԻՆ ԵՐԵԽԱՅԱԿԱՆ ԿԱԼԱՆՔՈՒՄ 10-ԻՑ 13 ՏԱՐԵԿԱՆ ԱՆՉԱՓԱՀԱՍԻ

Ստորև տրված տեղեկությունները ձեզ տրվում է ձեր հասկացած լեզվով: Ձեր ծնողները կամ ծնողական լիազորը կստանա նույն տեղեկությունները, ի հարկե, եթե դա չի հակասում ձեր հիմնական շահերին և կամ եթե դա ռիսկ չի հարուցում ընթացակարգին: Դուք կարող եք պահել այս փաստաթուղթը ձեր մոտ, երեխայական կալանքի ընթացքում:

Դուք տեղեկացված եք, որ գտնվում եք երեխայական կալանքում, քանզի ձեր դեմ գոյություն ունեն տվյալներ, որ մեզ թույլ է տալիս կասկածելու, որ դուք կատարել եք օրենքին հակառակ արարքներ, որը կարող է պատժվել 5 տարուց պակաս ազատազրկմամբ:

Դուք իրավունք ունեք իմանալու ձեր դեմ ուղված հանցաքի մանրամասները՝ թվականը, կատարման վայրի մասին տեղեկությունները և երեխայական կալանքի պատճառները:

Ձեր երեխայական կալանքի ընթացքում, որ կարող է տևել 12 ժամ, դատախազը (le procureur), կամ հետաքննող, կամ երեխաների դատավորը (le juge d'instruction ou des enfants) կարող են որոշել, որ երեխայական կալանքը երկարաձգվի ևս 12 ժամ: Եթե կալանքը չի երկարաձգվում, ապա դուք տեսաժողով (visioconférence) կ՛անցկացնեք դատավորի հետ:

Երեխայական կալանքի վերջում, կա՛մ կներկայանաք դատավորի առաջ և կամ ազատ կ՛արձակվեք:

Ձեզ տեղեկացվում է, թե դուք իրավունք ունեք

Զգուշացնել որոշ մարդկանց ձեր կալանքի մասին

- Ձեր ծնողները, կամ ծառայությանը որին դուք վստահված եք, պարտադիր տեղեյակ կը պահվեն ձեր երեխայական կալանքի տակ լինելու և ձեր դեմ ուղված հանցանքի մասին: Դուք կարող եք նաև խնդրել, որ ձեր երեխայական կալանքի մասին տեղեկացվի մեկ անհատ՝ ում հետ որ դուք ապրում եք սովորաբար, կա՛մ ձեր ծնողներից մեկին, կա՛մ ձեր եղբայրներից և քույրերից մեկին, կա՛մ ձեր խնամակալին, կամ ձեր շահերը պաշտպանող անհատին:
- Եթե դուք ֆրանսիացի չեք, կարող եք նաև տեղեկացնել ձեր երկրի հյուպատոսական մարմիններին:
- Հնարավորության դեպքում, նրանք, ձեր կողմից օգնության դիմում ստանալուց հետո, ամենաուշ, 3 ժամվա ընթացքում կմիջամտեն:

Հաղորդակցվել մեկ անձի հետ

Դուք կարող եք հայց ներկայացնել, գրավոր կերպով, հեռախոսով և կամ դեմ առ դեմ հանդիպում անցկացնելու մեկ հոգու հետ:
Սակայն, ոստիկանության պաշտոնյան կարող է մերժել ձեր հայցը, եթե նկատի, որ այդ վտանգավոր է:
Ոստիկանության պաշտոնյան կը որոշե, թե ե՛րբ և ի՛նչպես կարող է կայանալ այդ զրույցը, որ չի կարող գերազանցել 30 րոպեն: Զրույցը կ՛անցկացվի ոստիկանության պաշտոնյայի վերահսկողության ներքո:

Հետազոտվել բժշկի կողմից

Առաջին 12 ժամվան ընթացքում, դուք կհետազոտվեք բժշկի կողմից:
Երկրորդ անգամ կհետազոտվեք, եթե կալանքը երկարաձգվի:

Հայտարարություններ կատարել, հարցերին պատասխանել կամ լռություն պահպանել

Ոստիկանությունում ձեր անձը հաստատելուց հետո, դուք իրավունք ունեք լսումների ժամանակ,-
- Հայտարարություններով հադես գալ,
- Պատասխանել ձեզ տրված հարցերին,
- Լուռ մնալ:

Օրինական ներկայացուցչի ուղեկցություն

Եթե իրավասու մարմինը անհրաժեշտ համարի, լսումների կամ հարցաքննությունների ընթացքում, ձեզ կարող է ուղեկցել ձեր պատասխանատուն: Անհրաժեշտության դեպքում, դուք նաև կարող եք նշանակել մի այլ չափահասի, որպեսզի ձեզ ուղեկցի: Չափահասը կարող է նշանակվել նաև դատավորի կողմից:

Փաստաբանի օգնություն

Պարտադիր է օգտվել փաստաբանի օգնությունից

Փաստաբանի ընտրություն

Երեխայական կալանքի սկզբից, լսումների ցանկացած պահին ու կալանքը երկարաձգվելու դեպքում, դուք կարող եք խնդրել փաստաբանի օգնությունը անմիջապես: Փաստաբանը կարող է նշանակվել թե՛ ձեր կողմից, թե՛ ձեր ծնողների կողմից, հակառակ դեպքում՝ ոստիկանատան փաստաբաններից մեկը կարող է նշանակվել, որպեսզի ձեզ պաշտպանի:

Փաստաբանի օգնության և միջամտության ժամկետը

Փաստաբանը կարող է ձեզ հետ զրուցել 30 րոպե: Զրույցի գաղտնիությունը երաշխավորված է:
Երեխայական կալանքի երկարաձգման դեպքում, կարող եք կրկին հանդիպում խնդրել հենց նույն փաստաբանի հետ:
Եթե խնդրեք, փաստաբանը կարող է ձեզ հետ լինել նաև հարցաքննությունների ժամանակ :

Եթե ձեր առաջին լսումը, անձի հաստատատման չի վերաբերում, հետևաբար, այդ չի կարող սկսվել առանց ձեր փաստաբանի ներկայության. փաստաբան պահանջելու հայց ներկայացման առաջին րոպեից մինչև 2 ժամվա ժամկետի ավարտը:
Եթե 2 ժամ անց փաստաբանը դեռ չի ներկայացել, հարցաքննությունը կարող է սկսվել:

Համենայնդեպս, եթէ հետաքննությանը պարտադրի, ձեր առաջին նիստը կարող է անմիջապես սկսել, նույնիսկ ձեր փաստաբանի բացակայության դեպքում, հանրապետության դատախազի կամ հետաքննիչ դատավորի և կամ երեխաների դատավորի թույլտվությամբ:

Եթէ ձեր փաստաբանը ներկայանա լսումների կամ առերեսման ընթացքում, հետևաբար, լսումը կ՛ընդհատվի ու դուք կկարողանաք զրուցել փաստափանի հետ:

Թարգմանիչի օգնություն

Եթե դուք ֆրանսերեն չեք խոսում, կամ չեք հասկանում, իրավունք ունեք, անվճար, թարգմանիչից օգտվել նիստերի ժամանակ, ինչպես նաև փաստաբանի հետ հանդիպումների ընթացքում:

Հայց ներկայացնել երեխայական կալանքը վերջ դնելու նպատակով

Դուք կարող եք դիմել դատախազին կամ դատավորին ու խնդրել, որ որոշումը կասեցվի, եթե նա որոշի երեխայական կալանքը երկարաձգել:

Ծանոթանալ ձեր գործերի որոշակի փաստաթղթերի հետ

Ձեր, կամ ձեր փաստաբանի խնդրանքով, նախքան ձեր երեխայական կալանքը երկարաձգելու որոշումը, դուք կարող եք ծանոթանալ ձեր գործերին:

- Հարուցված գործի գրանցումին, կամ կալանավորման ծանուցագրին,
- Ձեզ ստուգող բժշկի ատեստատին կամ ատեստատներին,
- Ձեր լսումների արձանագրություններին:

Դիտարկումներ ներկայացնել դատախազին

Երեխայական կալանքից հետո, կարող եք, նվազագույն մեկ տարվա ընթացքում, ծանոթանալու համար ձեր գործերին եւ կամ դիտարկումներ ներկայացնելու համար կարող եք դիմել դատախազին նամակով՝ ստացման հաստատումով նամակ (lettre recommandée avec demande d'avis de réception) և կամ ուղակի դիմում ներկայացնել դատարանի քարտուղարին (greffe), որը դիմումի փոխարեն ձեզ կը հանձնի ստացման փաստաթուղթ:

Անձնական կյանքի պաշտպանության իրավունքը

Ձեր լսումները կնկարահանվեն, բացի եթե տեխնիկապես հնարավոր չե այն: Արգելվում է, ցանկացած մարդու, այդ լսումների ձայնագրությունները հեռարձակել:
Այդ ձայնագրությունները կարող են հեռարձակվել միմիայն փակ նիստերի ժամանակ: